նում էր անթառամ ծաղիկը: Վասպուրականի լեռների ծաղիկները չորանալուց յետոյ եւս պահպանում են իրանց գեղեցկութիւնը: Ես թողնում եմ ուրիշ մանր-մունր զարդարանքները, որոնց բոլորից երեւում էր, որ վարպետ Փանոսը ոչ միայն լաւ արհեստաւոր էր, այլեւ կրթոած ճաշակի տէր մարդ էր եւ իրան շրջապատել գիտէր հազոագիւտ առարկաներով: Սենեակի պատերը ծեփոած էին սպիտակ գաջով, որի վրայ երեւում էին պարսկական ճաշակով նկարոած զանազան տեսարաններ: Մի տեղ պատկերացրած էր վագրի որսորդութեան հանդէս. մի երիտասարդ, փղի վրայ նստած, երկայն նիզակը ձեռքում բռնած, կռւում էր ամեհի գազանի հետ. շները շրջապատել էին նրան, բայց ոչ մէկը չէր համարձակւում մօտենալ. վագրը իր առջեւի ճիրաններով պատերազմում էր փղի զօրաւոր կնճիթի հետ. երիտասարդը իր նիզակի ծայրը սրել էր նրա կողքը: Մի այլ տեղ կատարւում էր սալամի հանդէս. Արեւելքի թագաւորներից մէկը, շողշողուն գոհարներով զարդարոած, նստած էր փառաւոր գահի վրայ. հարիւրաւոր գլուխներ խոնարհոած էին նրա առջեւ. արքունիքի հռետորը, գահի մօտ կանգնած, ձեռքը ոգեւորութեամբ բարձրացրած, ճառախօսում էր, գովաբանելով արքայի ողորմածութիւնը եւ չկատարած սխրագործութիւնները: Մի տեղ ուժից ընկած. ծերունի մահմեդական էֆենդին, թիկն տոած թաւիշեայ մութաքաներին, պառկած էր փափուկ օթոցի վրայ. նարգիլէի օձապտոյտ ծխաքարշը թոյլ կերպով մխում էր նրա բերնում. երկու մանկահասակ կանայք փայփայում էին նրա մեկնած ոտները, երրորդը արմաւենու տերեւից կազմոած հովհարով զովացնում էր զառամեալ դէմքը: Մի այլ տեղ չորս սեւամորթ ստրուկներ, կիսամերկ, բոբիկ ոտներով, թեւքերի վրայ տանում էին մի շքեղ պատգարակ, որի մէջ նստած էր նրանց տէրը, նախշուն, ոսկենկար զգեստներով: Վերջին երկու պատկերները բոլորից աւելի գրաւեցին իմ ուշադրութիւնը:

Ինձ պատահել էր տեսնել Պարսկաստանի հարուստ հայերի տներում նկարներով զարդարոած սենեակներ, բայց նրանց նկարները ոչինչ միտք չունէին, պատկերացնում էին ծաղիկներ, ափսէների մէջ դրած պտուղներ, պարտէզներ եւ սիրուն կանանց դէմքեր: Իսկ այստեղ, վարպետ Փանոսի հիւրանոցում պատկերների մէջ ես իմաստ էի տեսնում, կարծես նրանք դիտմամբ պատոիրոած լինէին:

Սենեակի յատակը թէեւ զուրկ էր տախտակամածից, բայց նրա փոխարէն ծածկոած էր եղէգնեայ փսիաթներով, որոնց վրայ տարածել էին գեղեցիկ պարսկական գորգեր եւ կապերտներ: Վերջինները տեղային տնային արհեստի արդիւնք էին: Անկողինները, ծալած, փաթաթած, առանձին-առանձին դրած էին պատերի մօտ: Նրանց թիւը ցոյց էր տալիս, թէ վարպետ